ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ

13.06.2014

Ս.թ. հունիսի 10-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի գլխավորած պատվիրակությունը ՌԴ Արխանգելսկի մարզ այցի ընթացքում «Հյուրատուն» կոչվող երկրամասային թանգարանային համալիրում մասնակցեց «Բարեկամության կամուրջ» ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը, որն անցկացվում էր 6-րդ Հյուսիսային ազգամիջյան ֆորումի և Հայկական մշակույթի օրերի շրջանակներում: Ցուցահանդեսը նվիրված էր Արխանգելսկի երկրամասում հայկական համայնքի կազմավորման տասնամյակին: Ներկայացվեցին հայկական մշակույթի և կենցաղի առարկաներ, հայ գեղանկարիչների, կավագործ վարպետների աշխատանքներ: Ցուցադրության էին դրված հայկական գորգեր, կարպետներ, ձեռագործ աշխատանքներ, ազգային տարազներ, հայկական ուտեստներ, աղանդեր, չրեր, ավանդական փախլավա և այլն: Համերգային կատարումներով հանդես եկավ Գյումրիից հրավիրված ժողովրդական գործիքների համույթը:

Ներկա էին Արխանգելսկի կառավարության անդամներ, հայ համայնքի ներկայացուցիչներ, հյուրեր: Ելույթներ ունեցան Արխանգելսկի մշակույթի փոխնախարարը, հայ համայնքի ղեկավարը, այլ անձինք:
Նախքան միջոցառման մեկնարկը հայկական պատվիրակության անդամների համար կազմակերպվեց հետաքրքիր էքսկուրսիա «Հյուրատուն» տարածաշրջանային թանգարանային համալիրում, տեղի ունեցավ հանդիպում թանգարանի տնօրինության հետ, խոսվեց միջմշակութային համագործակցության և, մասնավորապես, վայոցձորցի դպրոցականներին հյուսիսային ռուսաստանյան մշակութային արժեքներին հաղորդակից դարձնելու հնարավորությունների մասին: